ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.05.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ 370-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 177/41 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 101.6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 0,003826ՀԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՐԻԳՈՐԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Գրիգորի Հակոբջանյանի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 4437 դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի թիվ 177/41 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում, Գրիգորի Հակոբջանյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված 101.6քմ արտաքին (90.0քմ ներքին) մակերեսով ավտոտնակը (վկ.16052022-09-0034)(101.6x1673=170000) մեկ հարյուր յոթանասուն հազար ՀՀ դրամով և 0.003826հա մակերեսով սպասարկման հողատարածքը (38.26x2887=110500) մեկ հարյուր տաս հազար հինգ հարյուր ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գրիգորի Հակոբջանյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022/18/05
Ք.Գորիս